ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЬ
АДМИНИСТРАЦИИ
АРМАВИРСКОГО
МАРЗПЕТАРАНА

0901, Ք. ԱՐՄԱՎԻՐ
ԱԲՈՎՅԱՆ-71
Հեռ. /0237/ 2- 42- 62
Ֆաքս /0237/ 2 - 42 - 62

0901, Г. АРМАВИР
УЛ. АБОВЯН - 71
Тел. / 0237/ 2 – 42 -62
Факс. / 010/ 28-06-46

24 11 2016 թ. N 02/14/4603-16

<<ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԿԻՆ Լ.ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 2016 թվականի նոյեմբերի 17-ի N 307-ի 4 գրության , հայտնվում է, որ ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի <<բ>> ենթակետով և երկրորդ մասով, <<Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի վեցերորդ մասով, 22-րդ հոդվածի չորրորդ և յոթերորդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 29-ի N 38-Ն որոշմամբ սահմանված կարգով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների 2016 թվականի 1-ին կիսամյակի ծառայողական գործունեության գնահատման դրական եզրակացությունները և աշխատանքի կատարողականի կիսամյակային գնահատականը. 2016 թվականի փետրվար ամսին պարգևատրվել են 97, հուլիս ամսին՝ 99 քաղաքացիական ծառայողներ, 2016 թվականի փետրվար ամսին միանվագ դրամական պարգևատրմամբ խրախուսվել են թվով 5 հայեցողական պաշտոն զբաղեցող անձինք (3 օգնական և 2 խորհրդական) և 1 պայմանագրային աշխատող:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի օգնականներին և խորհրդականներին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի բարձրագույն պաշտոնների խմբի 2-րդ ենթախմբի, գլխավոր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող և ներքին աուդիտի բաժնի քաղաքացիական ծառայողների պարգևատրումների մասին տեղեկատվությունը տեղադրված է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայքում / http://armavir.mtad.am/, իսկ աշխատակազմի քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 2-րդ, 3-րդ ենթախմբերի, առաջատար և կրտսեր պաշտոնների խումբ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին պարգևատրման մասին տեղեկատվությունը ներկայացվում է էլեկտրոնային տարբերակով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատ.՝ Վ.Մկրտչյան
Ն.Մարտիրոսյան